

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:
- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2014թ.-ին կաճի մոտ 40%-ով՝ կազմելով մոտ 33 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել բնակչությանն ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում տրամադրված ավելի քան 1800 հիփոթեքային վարկ (որից մոտ 700-ը ուղղվելու է բնակարանային էներգոարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագրի իրականացմանը):
- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:
- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, Ֆրանսիական գարգացման գործակալության հետ կնքված վարկային գիծ), այնպես էլ պարտատոմսերի հերթական թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, 2014 թվականի ընթացքում Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել մոտ 5 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսությունում տիրող իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից

ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մեկից մինչև երեք տարի մարման ժամկետով:

- 2013թ. դեկտեմբերի 17-ին Ընկերությունը 10 մլն եվրո վարկային գծի պայմանագիր ստորագրեց Ֆրանսիական զարգացման գործակալության հետ՝ բնակարանային էներգոարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագրի իրականացման նպատակով: Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունը 2014թ. երկրորդ եռամսյակից նախատեսում է սկսել բնակարանային միկրովարկավորման և էներգոարդյունավետության բարձրացման վարկավորման վերաֆինանսավորումը:

Մինևույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:

- Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը: